600.0153.08.05.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2018 թվականի №153Ա

քաղ. Երևան

«ԳՐԻԱՐ ՏԵԼԵԿՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2018 թվականի ապրիլի 26-ի №01/11.1/7554-18 և «ԳՐԻԱՐ ՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի մարտի 27-ի և 29-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Համաձայնություն տալ «ԳՐԻԱՐ ՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակից Սերգեյ Ազարյանին պատկանող բաժնեմասի 25 տոկոսը Ռուսաստանի Դաշնությունում գրանցված «ՄԻԳՈ ԳՐՈՒՊՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օտարելուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԳՐԻԱՐ ՏԵԼԵԿՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
8 մայիսի 2018թ.